«Ավագ դպրոցների ֆունկցիոնալության բարելավում» ենթադրամաշնորհային ծրագրի ամփոփիչ զեկույց

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակականկազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրվածենթադրամաշնորհի շրջանակներում «Քաղաքացիական համերաշխություն» ազատական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավագ դպրոցների ֆունկցիոնալության» բարելավում ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Քաղաքացիական համերաշխություն» ազատական հասարակական կազմակերպության, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Նախաբան

Ավագ դպրոցների (12-ամյա կրթության) համակարգը ՀՀ կրթական համակարգում ներդրվել է ոչ շատ վաղ անցյալում և դեռ շարունակում է իր զարգացման փուլերն անցնել: Հասարակության մեջ, հատկապես՝ շահառուների շրջանում (աշակերտներ, ծնողներ, մասամբ՝ ուսուցիչներ) կա տարածված կարծիք, որ ավագ դպրոցների գործարկումն անիմաստ էր և պետք չէր այն ներդնել, քանի որ աշակերտ անիմաստ ժամանակ է վատնում այդտեղ: Սակայն, ավագ դպրոցները շատ ավելի կարևոր դերակատարում պետք է ունենան և ավագ դպրոցների ներսում համակարգային փոփոխություններ կատարելով, հասարակությանը դրանց կարևորության և նշանակության մասին իրազեկելով հարկավոր է փոխել այդ թյուր կարծիքը:

Հաշվի առնելով ավագ դպրոցներում առկա մի շարք խնդիրները և դրանց լուծում տալու կարևորությունը Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Քաղաքացիական համերաշխություն» ազատական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող « Ավագ դպրոցների ֆունկցիոնալության բարելավում» ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք ուսումնասիրություններ այս ոլորտում և փորձ է արվել սույն զեկույցով առաջարկել որոշակի լուծումներ դրանց համար:

Ենթադրամաշնորհային ծրագրի ընդհանուր նպատակներն են՝

- Ավագ դպրոցների արդյունավետության աստիճանի չափումը, խնդիրների և դրանց առաջացման պատճառների ուսումնասիրություն,
- Վերոնշյալ խնդրի հետ կապված ինտենսիվ աշխատանքներ իրականացնել շահագրգիռ կողմերի հետ (աշակերտներ, ծնողներ, ուսուցչական կազմ, լիազոր մարմիններ),
- Ուսումնասիրությունների, բացահայտված խնդիրների հիման վրա կազմել զեկույց՝ ներառելով ավագ դպրոցների արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկներ և ներկայացնել լիազոր մարմիններին»:

Ենթադրամաշնորհային ծրագրի հատուկ նպատակներն են՝

- Ավագ դպրոցներում դասավանդվող առարկաների արդյունավետության ուսումնասիրությունը և դրանց հատկացված ժամաքանակի արդյունավետության ուսումնասիրություն,
- Ավագ դպրոցներում հնարավոր չափով մասնագիտական կամ ընտրական առարկաների ներդրման նախադրյալների ուսումնասիրություն և դրանց ներդրմանն ուղղված քայլերի ձեռնարկում:

Ծրագիրն իրականացնելու մոտիվացիան

Ավագ դպրոցները երեխայի կայացման և զարգացման համար կարևոր դերակատարում ունեն: Ավագ դպրոցում սովորելու տարիները այն ժամանակահատվածն է, երբ աշակերտը

հնարավորություն և ժամանակ է ունենում վերջնական որոշում կայացնել մասնագիտության, ուսումնական հաստատության ընտրության հարցում: Այս փուլում ավագ դպրոցների ուսումնական պլանը, առարկաների բազմազանությունը և ընտրության հնարավորությունը էական ազդեցություն պետք է ունենան և աշակերտին ճիշտ կերպով ուղղորդեն: Ավագ դպրոցներում անհրաժեշտ է բացառել կամ նվազագույնի հասցնել միջին դպրոցի և ավագ դպրոցի ուսումնական պլանի կրկնությունը: Նման տիպի կրկնությունը ոչ միայն անհետաքրքիր է դարձնում ամբողջ ուսումնական պրոցեսը, այլև անարդյունավետ է դառնում: Աշակերտի մոտ կրթություն ստանալու, ճիշտ մասնագիտություն ընտրելու մոտիվացիան վերափոխվում է ավարտական և ընդունելության քննությունները տեխնիկապես հանձնելու մոտիվացիայի, որի դեպքում, բանականաբար, չի կարող ապահովվել որակ: Այսպիսով ավագ դպրոցը դադարում է ծառայել իր սկզբանական նշանակությանը և նպատակներին:

Ինչու՞մ է կայանում ավագ դպրոցների ճիշտ ֆունկցիոնալության խնդիրը և ինչու՞ է այն կարևոր:

Ավագ դպրոցների ուսումնական պրոցեսը պետք լիովին տարբերվի միջին դպրոցի ուսումնական պրոցեսից՝ հագեցած լինելով մասնագիտական առարկաներով, որոնք թույլ կտան աշակերտին կողմնորոշվել նախասիրությունների և մասնագիտական հակումների հարցում: Միևնույն ժամանակ, ուսումնական ծրագիրը պետք է լինի շատ ճկուն՝ աշակերտին ընտրության լայն հանարավորություն տալով:

Ավագ դպրոցների նպատակին ճիշտ կերպով ծառյելը մեծ նշանակություն ունի աշակերտի, որպես քաղաքացի և ապագա մասնագետ կայանալու հարցում: Իրականությունն այնպիսին է, որ ավագ դպրոցն ավարտելիս, աշակերտը միշտ չէ, որ մասնագիտության կամ ուսումնական հաստատության հարցում ճիշտ որոշում է կայացնում: Արդյունքում՝ բավարարված չլինելով մասնագիտության ընտրության հարցում, աշակերտը (ուսանողը) մոտիվացված և շահագրգռված չի լինում մասնագիտությունն ավելի խորապես ուսումնասիրելու և հագեցած կրթություն ստանալու հարցում: Այսպիսով ունենում ենք հազարավոր բուհերի շրջանավարտներ, ովքեր կամ այնքան էլ լավ չեն տիրապետում իրենց մասնագիտությանը կամ տվյալ

մասնագիտությունն իրենցը չեն համարում: Հետագայում տարբեր ոլորտներում որակյալ կադրերի պակաս է առաջանում:

Ավագ դպրոցներում մասնագիտական առարկաների ներդրումը (առարկաները պետք է հնարավորինս ծանոթացնեն մասնագիտության էությանը) հետագայում կապահովի աշխատաշուկան որակյալ կադրերով:

Մասնագիտական կարծիքներ

Ավագ դպրոցների խնդիրների ուսումնասիրությունների շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել ոլորտի մի քանի մասնագետների հետ:

Նրանց թվում են՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյանը, նույն Կրթահամալիրի Ավագ դպրոցի ղեկավար՝ Մարթա Ասատրյանը, նույն Կրթաամալիրի կրթական ծրագրերի ղեկավար՝ Սուսան Մարկոսյանը, Հակոբ Կոջոյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն՝ Գոհար Սանոյանը, ինչպես նաև առանձնազրույց թիվ 115 ավագ դպրոցի տնօրեն՝ Գայանե Անտոնյանի հետ:

Աշոտ Բլեյան

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը ստեղծվել ՀՀ կառավարության որոշմամբ 1989 թվականին: Այն ստեղծվել է 183 դպրոցի հիմքի վրա, որպես փորձարարական, հետազոտական միավորում, որպեսզի կարողանա իրականացնել իր կողմից մշակած կրթական ծրագրեր (մանկապարտեզից սկսած մինչև քոլեջ): Այդ կրթական ծրագիրը կոչվում է հեղինակային կրթական ծրագիր: Այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է 2 կրթական ծրագիր: Մեկն այն կրթական ծրագիրն է, որը մշակում և իրականացնում է Կրթության և գիտության նախարարությունը, որի պարագայում ՀՀ տարածքի դպրոցներին վերապահված է այդ կրթական ծրագրի

իրականացումը: Երկրորդ կրթական ծրագիրը, որն իրականացնում է Կրթահամալիրը, կոչվում է հեղինակային ծրագիր: Կրթահամալիրի մանկավարժական հավաքանին է իրականացնում, թե ծրագրի մշակումը, թե իրականացումը: Կրթահամալիրը պետական կազմակերպություն է և այլընտրանքային կրթական ծրագիր է: Այժմ Կրթահամալիրն աշխատում է հեղինակային կրթական ծրագրի ցանցի վրա, դրա տարածման վրա: Ըստ պարոն Բլեյանի այն կրթական ծրագիրը, որն իրականացվում է պետության կողմից, այնքան էլ հաջողված չէ: Ըստ նրա, կան լիքը սահմանափակումներ, որոնք պետք է վաղուց վերացված լինեին, որպեսզի ուսուցիչն ու սովորողն իրենց տաղանդն ավելի լավ օգտագործեն:

Կրթահամալիրը հայտնի է մասնագիտական առարկաների հարուստ ցանկով, որոնք առկա են նաև Ավագ դպրոցում: Կրթահամալիրը կազմված է ոչ միայն հանրակրթական դպրոցներից, այլ նաև՝ ուսումնական կենտրոններից, որոնք ամբողջությամբ բավարարում են սովորողի հետաքրքրությունները և հնարավորություն են տալիս կողմնորոշվել նախընտրությունների մեջ: Այդ կրթական աշխարհը շարունակաբար ընթարձակվում է և անհատին հնարավորություն է տալիս ընտրություն կատարել: Մյուս դպրոցներում հաջողությունների հասնելու համար պետք է վերջիններս բաց համակարգ դառնան, պետք է կարողանան իրենց ընձեռվաց իրավունքներից օգտվել կարողանան և ավելի համարձակ լինեն:

Մարթա Ասատրյան

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Ավագ դպրոցում սովորողն ունի անհատական ուսումնական պլան, որը ունի մի քանի բաղադրիչներ: Այն իր մեջ ներառում է ընտրությամբ դասընթացներ և ակումբներ: Ընտրով առարկաների միջոցով սովորողը ձևավորում է իր նախամասնագիտական կողմնորոշումը: Ակումբների միջոցով էլ ձևավորվում են մասնագիտական խմբերը, որոնք գործնական պարապմունքների միջոցով, ցուցահանդեսների, համերգների, տարբեր նախագծերի տեսքով հանրայինացվում են: 12-րդ դասարանում սովորողն ընտրում է այն առարկաները, որոնք իրեն պետք են: Բացի դրանից, սովորողն իրականացնում է նաև կամավորական և

բարեգործական աշխատանքներ: Եթե սովորողն աշխատում է, այն նույնպես ներառվում է ուսումնական պլանի մեջ:

Ընթունելության առարկաների համար 10-րդ դասարանից սկսած հատկացվում է շաբաթական 6 ժամ՝ 8-ից 12 հոգանոց խմբերով: Ըստ տիկին Ասատրյանի, մյուս ավագ դպրոցների կաղելու խնդիրը ունի տեխնիկական և բովանդակային բաղադրիչ: Ըստ նրա, ավագ դպրոցում ոմանք չեն ուզում սովորել, ոմանք պարզապես ժամանակ են անցկացնում: Սովորողների խմբերը շատ բազմազան են, հետևաբար՝ հետաքրքրությունները նույնպես: Սա տեխնիկական խնդիրն է:

Ավագ դպրոցները չունեն լավ մշակված ծրագրեր, ուսուցիչներ համապատասխան վերապատրաստումներ չունեն: Ավագ դպրոցի սովորողի հետ աշխատանքը տարբերվում միջին դպրոցի սովորողի հետ տարվող աշխատանքներից: Ավագ դպրոցի սովորողի պահանջմունքներն ավելի բարձր են:

Սուսան Մարկոսյան

Ավագ դպրոցների կայանալու մարտահրավերներից մեկը պայմանների խնդիրն է: Կրթահամալիրում գործում է կրթականց ցանց: Այստեղ հանրակրթությունն ու լրացուցիչ կրթությունը միավորված են հեղինակային կրթական ծրագրով: Կրթահամալիրը հեղինակային կրթական ծրագրով առաջարկում է կրթական պարտեզներ ստեղծել քաղաքի տարբեր ծայրամասերում: Այդ կրթական պարտեզները կամ ուսումնական կենտրոնները պետք է կարողանան սպասարկել տարածքի դպրոցներին: Այս ամենի համար անհրաժեշտ են կազմակերպչական ջանքեր ներդնել:

Գոհար Սանոյան

Ըստ տիկին Սանոյանի մենք փակուղի ենք մտնում, երբ ավագ դպրոցի որակը որոշվում է բուհ ընդունվողների քանակով: Բուհ ընդունվելը լրիվ ուրիշ խնդիր է լուծում և լրիվ այլ պահանջներ ունի: Տիկին Սանոյանը կցանկանար, որ բուհի ընդունելությունը ավագ դպրոցում չսարքեին միակ առաջնահերթությունը: Աշակերտը 2-3 տարի չպետք է

տառապի միայն պարզապես բուհ ընդունվելու համար: Այս խնդիրը կարելի է լուծել, օրինակ կրեդիտային համակարգ ներդնելով: Գնահատականն այլ բան է, կրեդիտն այլ բան է: Կարելի է բուհին հնարավորություն տալ առաջին կիսամյակում որոշել, թե արդյոք ուսանողը որոշակի շեմեր հաղթահարում է, թե ոչ: Ավագ դպրոցները պետք է ավելի ճկուն դառնան և ընտրության լավ հնարավորություն տան աշակերտին: Աշակերտը պետք բնականոն կրթություն ստանա, որպեսզի հասկանա, թե ինչն է իրեն ավելի հոգեհարազատ: Ընդունելության քննությունը չպետք է դամոկլյան սուրի պես կախված լինի աշակերտի գլխին, ինչը բնականոն կրթությունից աշակերտին շեղում է: Արդյունքում՝ բուհ ընդունվելուց հետ մեկ տարի հետո, ուսանողը հասկանում է, որ իր ընտրած մասնագիտությունն իրեն ընդհանրապես չի հետաքրքրում:

Այս խնդիրները լուծելու համար ուսումնական ծրագրերը պետք է ավելի ճկուն դառնան: Ըստ նրա, անձի կայացման գործում մեծ դերակատարում ունեն հումանիտար առարկաները: Այնպիսի առարկաներ, որոնք աշակերտին հնարավորություն կտան մտածելու (օրինակ՝ պատմություն, գրականություն, երաժշտություն, արվեստի պատմություն և այլն): Սրանք այն առարկաներն են, որոնց միջոցով աշակերտը կկարողանա իրեն հուզող հարցերի պատասխանները գտնել: Աշակերտի, որպես անհատի կայացման ուղին սա է:

Աշակերտների, ուսուցիչների և ծնողների կարծիքները. հարցումների արդյունքներ

«Ավագ դպրոցների ֆունկցիոնալության բարելավում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում Երևանի ավագ դպրոցներում իրականացված հարցումները նպատակ ունեն ուսումնասիրել և վեր հանել այն խնդիրները և դրանց առաջացման պատճառները, որոնք առկա են ավագ դպրոցներում:

Հարցումը անցկացվել է ֆոկուսային երեք խմբերի շրջանում: Հարցման շրջանակները ներառում են ավագ դպրոցների աշակերտներին, վերջիններիս ծնողներին և ավագ դպրոցում դասավանդող ուսուցչական կազմը:

Հարցաշարը կազմվել է մեծամասամբ ընտրանքային հարցերի տեսքով՝ միաժամանակ թույլ տալով հարցաշարը լրացնողին որոշ հարցերում արտահայտել իր սեփական կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ:

Ավագ դպրոցների աշակերտների շրջանում անցկացված հարցումների ամփոփում

Հարցումը լրացրել է ընդհանուր թվով 261 աշակերտ, որոնք սովորում են 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, Հակոբ Կոջոյանի անվան արվեստի դպրոցում և Սոս Հովսեփյանի անվան թիվ 115 դպրոցում:

Հարցումը պարունակում է և՛ ընտրանքային, և՛ շարադրելի 10 հարցեր:

Հարցման մասնակիցներից **137**-ը (52%) արական սեռի են, իսկ իգական սեռի ներկայացուցիչները **124**-ն են (48%) (Տե՛ս՝ Պատկեր 1)



Պատկեր 1

Հարցմանը մասնակիցներից ավագ դպրոցում **իրենց ուսումը շարունակել են իրենց որոշմամբ կամ ծնողների, ուսուցիչների, դասընկերների խորհրդով**: Տոկոսային հարաբերությունը հետևյալն է՝ (Պատկեր 2)



Պատկեր 2

Ավագ դպրոցում կրթության մակարդակը բավարարում է աշակերտների պահանջները: Դրա մասին է վկայում ստորև ներկայացված պատկերը. (Պատկեր 3)



Պատկեր 3

Ինչ վերաբերում է ավագ դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակելուն, աշակերտները տվել են պատասխաններ, որոնց ընդհանուր պատկերը հետևյալն է. (Պատկեր 4)



Պատկեր 4

Աշխակերտները գնահատել են նաև **իրենց ստացած գիտելիքների մակարդակը**: Արդյունքը՝ ստորև՝ (Պատկեր 5)



Պատկեր 4

Աշակերտներին հնարավորություն էր տրվել ընտրել այնպիսի առարկաներ, որոնք նրանք կուզենային, որ դասավանդվեր դպրոցում: Անհրաժեշտ է նշել, որ աշակերտների կողմից մեծ ուշադրության են արժանացել ինժեներիան, ծրագրավորումը և հավելյալ լեզուները, իրավունքի հիմունքները: Ստորև ներկայացվում է առարկաների ցանկը ցուցակը (առարկաները դասակարգվել են ըստ պահանջարկի).

Առարկա	**Աշակերտների քանակը**
Հավելյալ լեզուներ	75 աշ.
Ծրագրավորում	65 աշ.
Իրավունքի հիմունքներ	54 աշ.
Ինժեներիա (Ռոբոտաշինություն)	49 աշ.
Քաղաքագիտություն	40 աշ.
Տնտեսագիտություն	33 աշ.
Մեդիագրագիտություն	31 աշ.
Մշակութաբանություն	29 աշ.

Այլ առարկաներ	41 աշ.

Հաջորդ հարցումը վերաբերում է **առարկաների ժամացուցակին**: Աշակերտների մեծամասնությունը հակված է, որ պետք է ավելանան լեզուների և մաթեմատիկական գիտությունների ժամերը, մինչդեռ բնագիտական առարկաների, ինչպիսիք են՝ քիմիան, ֆիզիկան, կենսաբանությունը, ինչպես նաև պատմության ժամերը պետք է կրճատվեն կամ հանվեն դասացուցակից:

Ստորև ներկայացնում ենք **աշակերտ-ուսուցիչ-դպրոց** հարաբերությունների մասին հարցումների արդյունքները. (Պետք է նկատել, որ աշակերտների վերաբերմունքը ավագ դպրոցին կարելի գնահատել **լավ**՝ հաշվի առնելով նրանց՝ ստորև ներկայացված պատասխանները)

- Ընդհանուր հարցվածների **50%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցում ուսուցիչները հարգալից են աշակերտների հետ**:
- Ընդհանուր հարցվածների **32%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **աշակերտները հարգալից են ուսուցիչների հետ:**
- Ընդհանուր հարցվածների **43%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցում գործող կանոնները օրինաչափ են:**
- Ընդհանուր հարցվածների **48%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **ուսուցիչներն օգնում են աշակերտներին լիովին յուրացնել դասընթացը:**
- Ընդհանուր հարցվածների **33%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցը տալիս է բոլոր հնարավորությունները հետագա կրթությունը շարունակելու համար:**
- Ընդհանուր հարցվածների **38%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **չի ձանձրանում դպրոցում**:
- Ընդհանուր հարցվածների **34%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **սիրում է հաճախել դպրոց:**

- Ընդհանուր հարցվածների **37%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **դպրոցում աշխատում է ուժերի ներածին չափով:**
- Ընդհանուր հարցվածների **32%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **այն, ինչ սովորում է դպրոցում, օգտագործում է նաև դպրոցից դուրս:**
- Ընդհանուր հարցվածների **37%-ին** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **դպրոցը օգնում է զարգացնել իրենց ունակությունները:**
- Ընդհանուր հարցվածների **28%-ի** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծիքով՝ **իր դպրոցը օգնում է իրեն հասկանալ այն բոլոր քայլերը, որոնք անհրաժեշտ են համալսարան ընդունվելու համար:**

Ավագ դպրոցների աշակերտների ծնողների շրջանում անցկացված հարցումների ամփոփում

Հարցումը լրացրել է ընդհանուր թվով 49 ծնող, որոնց երեխաները սովորում են 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, Հակոբ Կոջոյանի անվան արվեստի դպրոցում և Սոս Հովսեփյանի անվան թիվ 115 դպրոցում:

Հարցումը բաղկացած է ընտրանքային 8 և շարադրելի 2 հարցերից:

Այն հարցմանը, թե **արդյո՞ք բավարարում է դասավանդվող առարկաների ցանկը**, ծնողները պատասխանել են՝



Այն հարցի, թե **բավարարու՞մ են դպրոցում առարկաների դասավանդման եղանակը և մեթոդաբանությունը**, արդյունքները հետևյալն են.



Ծնողներին հարց էր ուղղվել, թե **արդյո՞ք գոհ են այն ձևաչափից, որը օգտագործում է դպրոցը՝ ստուգելու երեխայի հաճախելիությունը**, ծնողները տվել են հավասար պատասխաններ՝



Այն հարցին, թե **արդյո՞ք բավարարում են այն դպրոցի տված հնարավորությունները, ուր հաճախում են նրանց երեխաները**, ծնողները այնքան էլ հուսադրող պատասխաններ չեն տվել.



Հարցման արդյունքները նաև ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած ծնողներից **25**-ը կամ ընդհանուր հարցվածների **60%**-ը **ուղղորդել է իր երեխային ավագ դպրոցի այս կամ այն հոսքում ներգրավվելու համար՝**



Հարցումը ցույց է տալիս, որ ծնողների վերահսկողությունը երեխաների կրթական գործընթացի վրա բավական բարձր է:



Կրկնուսույցի մոտ մոտ պարապմունքի անհրաժեշտություն տեսնում է հարցմանը մասնակցած ծնողների մեծամասնությունը **(74%):**



Ավագ դպրոցի աշակերտների ծնողները գնահատել են նաև այն **ավագ դպրոցի որակական մակարդակը, ուր սովորում է իրենց երեխան**: Մեծամասնությունը չի կողմնորոշվել:



Ծնողները նաև առաջարկել են՝

- **Վերանայել առարկաների ցանկը,**
- **Նորարարական տեխնոլոգիաների կիրառում դասապրոցեսի ընթացքում,**
- **Մասնագետների պարբերական և արդյունավետ վերապատրաստում:**

Ավագ դպրոցների ուսուցչական կազմի շրջանում անցկացված հարցումների ամփոփում

«Ավագ դպրոցների ֆունկցիոնալության բարելավում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում Երևանի ավագ դպրոցներում իրականացված հարցումներին մասնակցել է 24 ուսուցիչ:
Հարցաշարը բաղկացած է ընտրանքային **7** կետերից:

Հարցմանը մասնակցած ուսուցիչների (որոնց մեջ մեծամասնություն են կազմում 10-20 տարի մանկավարժական փորձ ունեցողները) **83%-ի** կարծիքով՝ **այսօր ավագ դպրոցի կրթական ծրագիրը աշակերտի պահանջներին չի բավարարում**, իսկ **17%-ն** էլ կարծում է հակառակը:
Առարկայական մեթոդմիավորումների ավագ դպրոցներում արդյունավետության մասին ուսուցիչների **67%-ը** ունի բացասական վերաբերմունք:

Ուսուցիչները **ուսուցիչ-դպրոց-աշակերտ** հարաբերությունների մասին.

- Ընդհանուր հարցվածների **54%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **իր դասավանդած առարկան կարևորվում է աշակերտների կողմից:**
- Ընդհանուր հարցվածների **42%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **առարկային հատկացված դասաժամերը բավարարում են աշակերտներին հիմնավոր գիտելիքներ տալու համար:**
- Ընդհանուր հարցվածների **38%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) մասամբ համաձայն է այն կարծիքին, թե **առարկայի դասավանդման ծրագիրը լիովին բավարարում է դպրոցի պահանջներին:**
- Ընդհանուր հարցվածների **57%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցում ուսուցիչները հնարավորություն ունեն անընդհատ զարգանալու:**
- Ընդհանուր հարցվածների **57%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցում ուսուցիչները վստահում են միմյանց:**
- Ընդհանուր հարցվածների **43%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **դպրոցների պայմանները բավարար են ուսուցիչների համար աշխատանքային միջավայր ապահովելու համար:**
- Ընդհանուր հարցվածների **48%-ը** (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **հպարտ է, որ աշխատում է այդ դպրոցում:**

- Ընդհանուր հարցվածների **32%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) **չի** կարծում, որ **ավագ դպրոցը օգնում է աշակերտներին պատրաստվել համալսարանական կրթությանը:**
- Ընդհանուր հարցվածների **54%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որ **ավագ դպրոցը նպաստում է աշակերտների ունակությունների զարգացմանը:**
- Ընդհանուր հարցվածների **43%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) դժվարանում է պատասխանել՝ **արդյո՞ք ավագ դպրոցում առարկաների թեթևացումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը, իսկ 25%-ը համաձայն է:**
- Ընդհանուր հարցվածների **39%**-ը (ի համեմատություն մյուս պատասխանների տոկոսների) կարծում է, որավագ դպրոցում առարկաների ավելացումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: